

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԿԱՆ

**ՓՈՐՉՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԿԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ**

Պրօֆ. Երնստ Մէյմանի «Գասախօսութիւններ փորձնական մանկավարժութեան մասին» գրքից

**Դպրոց մենող մանուկների մտապատճենների ցըանը.**

Դպրոցական ուսուցման առաջին տարուայ համարշատ կարեւոր է իմանալ, թէ մանուկը իւր շրջապատող արտաքին աշխարհից ստացած տպաւորութիւններից ինչն է ընդունում, որն է պահում և մշակում ու միացնում իւր փորձին։ Իբր մտապատճեր մանուկի մէջ մնում է այն տպաւորութիւնը, որը նա մշակում է, այս նրա գիտութիւնն է արտաքին աշխարհի մասին։ Փորձնական մանկավարժութեան մէջ այս խնդրի ուսումնասիրութիւնը կոչում է «երեխաների մտապատճերների շրջանի՝ ուսումնասիրութիւն»։ Որոշել ստատիստիկայով, թէ մանուկը ինչ ծանօթութիւններով է մտնում դպրոց՝ շատ կարեւոր է, նախ ուսուցիչը կարող է իմանալ, թէ աշակերտը ինչ իրերի հետ է ծանօթ, թէ որքան ուզիղ են այդ ծանօթութիւնները. որքան ամուր, բառերի պաշարը որքան է, խօսքի ինչ դարձուածքներ ունի և այլն։ Դպրոցի առաջին և երկրորդ տարուայ ուսուցման առարկաների ծրագիրը կազմւում է համաձայն այն ենթագրութիւնների, որ ունենում ենք դպրոց մտնող երեխաներին ծանօթ մտապատճերների նկատմամբ։ Մանուկի գլխում լինում են պարզ, կէս պարզ և յութ մտապատճերներ այն, ինչ որ նրան հասակաւորները բացատրում են, նա աշխատում է իւր ոյժերով պարզել և երեակայութեամբ լրացնել։ Այս ուղղութեամբ եռանդուն գործիչ Ստէնլի-Գոլլը այն եզրակացութեան էր եկել, որ ուսուցիչը պէտք է ուսման տարուայ սկզբին հետազոտէ աշակերտների հասկացողութիւնների շրջանը. մանուկների

հասկացողութեան շրջանը տափթեր է լինում, նայելով  
իրենց ծագման միջավայրին, փորձին, հասարակական դիրքին։ Յիզլերը ասում է «Ճնողների տանից գպրոց տեղափոխութելը մեծ ազդեցութիւն է անում երեխաների հոգու վրայ, ուստի թէ մանկավարժական, թէ երեխաների հոգեբանութեան տեսակէտից կարևոր է ծանօթանալ նրանց հոգեկան տուեալների և ընդունակութիւնների հետաքարտօլոմէի ուսումնասիրութիւններից երևում է, որ ազդիկները համեմատաբար քիչ ծանօթութիւններ ունեն քան նոյն հասակի տղաները, որբանոցների երեխաները աւելի մեծ պաշար ունեն, քան ընտանիքում՝ մեծացածները, իսկ նրանցից աւելի՝ մանկական պարտէզ յաճախողները։ 1879 թ. Դրա կարլ Լանգէն ուսումնասիրութիւններ կատարեց 500 աշակերտների նկատմամբ։ Նա դործ էր դնում հարցերի մեթոդը, առաջարկում էր երեխաներին 14 հարցորինակ—ռվ է տեսել արևի ծագումը կամ մայր մտնելը, ռվ է տեսել լուսինը և աստղերը, ռվ գիտէ ինչպէս են ցորենից հաց թխում և այն։ Այս մեթոդի դէմ առարկում էին, որ այս ձեռք չի կարելի որոշել, թէ մանուկը որքան մօտից է ճանաչում առարկան, որբան ընդունակ է վերլուծելու խոր հասկացողութիւնները։ Սաէնլի Գոլն էլ իւր ուսումնասիրութիւններից հանում է այն եզրակացութիւնը, որ չկան այնպիսի տեղեկութիւններ, որ ուսուցիչը վստահ կերպով ենթադրում է, թէ աշակերտները ունին, որ ամենից լաւ պատրաստութիւնն է երեխային գպրոց տալու համար ծանօթացնել բնութեան իրերի հետ և ուղարկել մանկական պարտէզ։ Դիւղի մանուկները քաղաքի մանուկներից առաւելութիւն ունեն, առաջինների թէ ծանօթութիւններն են ընդարձակ, թէ գիտողութիւններն էլ ճիշտ են։ Ճիշտ էլ նշանակում է Գոլլը, որ քաղաքի մանուկների համար կազմուած այբբենարանների նիւթը մեծ մասամբ գիւղական կեանքից է վերցրուած, որը նրանց ծանօթ չէ և մանուկները այդ պատճառով սիալ հասկացողութիւններ են կազմուած Քաղաքի մանուկները թէև թուով աւելի շատ առարկաներ գիտեն, բայց

ճիշտ չեն վերլուծում. գիւղի մանուկը մեծ մասամբ անշարժ առարկաներն է գիտում և աւելի ուղիղ. քաղաքի մանուկների առաւելութիւնն այն է, որ նրանք աւելի լաւ ու ճիշտ գիտեն հասարակական յարաբերութիւնները և մարդու բնաւորութիւնը. Հարտմանի հետազոտութիւնից երեսում է, որ տղաները աւելի լաւ գիտեն կենդանական աշխարհը և հասարակական գաղափարները իսկ աղջիկները միայն որոշ հասարակական պայմանների հետ են ծանօթ և գիտեն կրօնական գաղափարները. ըստ նոյն հետազոտութեան հարսանիք գաղափարը ծանօթ էր 70 տղայի, 227 աղջկայ, կնունքը՝ 170 աղայի, 220 աղջկայ, երեխաները առհասարակ տանը աւելի շտտ հասկացողութիւններ են ձեռք բերում քան դուրսը. նրանք հանդիպելով որևէ է նոր առարկայի կամ երեսյթի աշխատում են իրենց ունեցած ծանօթութիւնների հիման վրայ որևէ կերպ պարզել: Ընդհանրապէս երեխայի միտքը կանգ է առնում՝ ոյնպիսի բաների վրայ, որոնք նրան ծանօթ են, այս հանդամանքը կարեսը է մանկավարժական տեսակէտից. գաստիարակը հիմք ընդունելով ծանօթ գաղափարը, կարող է երեխային անծանօթ գաղափարի հետ ծանօթացնել. բայց չպէտք է մանուկը նոր բանից հրաժարուի, այլապէս նա եթէ չսովորի գիտարութիւններին յաղթել, կվարժուի մակերևոյթային, ոչ ճիշտ ըմբռնումների.

## V

## Աշակերտների յիշողութեան զարգացումը.

Յիշողութիւնը այն հոգեկան ընդունակութիւնն է, որի օգնութեամբ առաջուայ կրած տպաւորութիւնները մի քիչ ժամանակից յետոյ կարելի է վերականգնել, այլ և զուգորդել մտապատկերները և մտքերը որոշ ճշտութեամբ, ստիպել, որ նրանք նորից կենդանանան տպաւորութիւններից մնայուն հետքերի հիման վրայ. Յիշողութիւն ասելով՝ ուրեմն, ամենեաին չպէտք է հասկանալ նախկին տպաւորութիւնները ու մտապատկերները պահելը. դրանք միայն

գործողութիւններ են, որոնց նոյնքան քիչ կարելի է պահել, ոյքան և որևէ գործողութեան բնակութեան մէջ։ Անշուշտ յիշողութեամբ վերարտադրած մտապատկերն և իսկական, թարգմ մտապատկերն նոյնը չեն, բայց երկուօինմաշնութիւնը այնքան մեծ է լինում, որ կարելի է նրանց ինչ պէս հաւասար մեծութիւններ նկատել:

Մի քանի ֆիզիոլոգներ պնդում են, որ յիշողութիւնը օրգանական աշխարհի ընդհանուր յատկութիւնն է, աշխատանքի զանազան տեսակները և գործողութիւնները մի անգամ օրգանական նիւթի մէջ կատարուելով, նրանց մէջ առաջ են բերում յատկութիւն, նոյնը նորից կրկնելու Մկանների այն խմբերը, որոնք այդ գործողութիւնը կատարում են, հետեւալ անգամ նոյն գործողութիւնը կատարում են աւելի հեշտութեամբ։

Յիշողութիւնը մանկավարժական տեսակէտից երկուսի է բաժանվում՝ անմիջականի և տեսականի. անմիջականի նշաններն են. 1) տպաւորութեան անմիջական վերարտադրումն առանց ժամանակամիջոցի. 2) միանգամից ընդունել այն, ինչ որ պէտք է պահուի. 3) անմիջական յիշողութեան գլխաւոր պայմանն է, ուժեղ ու հաւասարաչափ կեդրոնացումն այն բանի վրայ, ինչ որ պէտք է պահուի. 4) այդ յիշողութեան առանձնայատուկ կողմն է մի տեսակ արձագանքի նման լինելը. օրինակ այդ գէպը մենք դեռ լսում ենք արտասանած խօսքերը, ինտոնացիոն, ձայնի հնչիւնը, Յիշողութեան յատուկ տեսակներն են կան. օրինակ ժամանակից և տարածութիւնից ստացած տպաւորութեան յիշողութիւն, անունների, թուերի, բառերի վերացականնշանակութեան, երեսակայութեան ծնունդ եղող երեսյթների և այլն յիշողութիւն։

Մանուկների յիշողութեան ուսումնասիրութեան համար գործ են ածում զանազան տեսակի փորձեր, օրինակ նեչեանը մանուկներին ցոյց էր տալիս առաջ 12 զանազան տեսակ առարկաներ, որոնք շօշափելի ուսման ժամանակ գործադրում են, երեխաները երկու վայրկեան նայում էին, ապա իրերը ծածկում էին և նրանք պէտք

Է նկարագրէին տեսածները. յետոյ վարագոյրի ետևից լսում են 12 տօն և զանազան գործիքների ձայն, յետոյ 12 երկանիշ թիւ էին տսում նրանց, ապա եռավանկ խօսքեր և այլն, մանուկները պէտք է յետոյ ասէին, Որքան բառերի միտքը նրանց ծանօթ է, այնքան աւելի հեշտ են յիշում. Այս և նման այլ փորձերից այն եզրակացութեանն են հասնում, որ յիշողութեան զարգացման ընթացքում տարուբերումներ են նկատում. յիշողութեան համար առանձնապէս անբարեյաջող շրջան են 14 և 15-րդ տարիները. Ըստ Լօրգինի համեմատաբար լաւ զարգացման շրջանը 10 և 12 տարիների մէջն է. Տղաների մէջ սկզբում ամենից աւելի զարգանում է առարկաների յիշողութիւնը, ապա այն խօսքերի յիշողութիւնը, որոնց բովանդակութիւնը տեսողութեանն է վերաբերում, յետոյ ձայների և տօների յիշողութիւնը և այլն. Աղջիկների մէջ տմենից առաջ զարգանում է տեսողութեան վերաբերեալ բառերի յիշողութիւնը, յետոյ առարկաներինը, յետոյ ձայնինը, յետոյ թուինը և այլն:

Հետաքրքիր է այն հանգամանքը, որ թուերի յիշուղութիւնը զարգանում է վերացական գաղափարի յիշուղութեան հետ և այս երկուսն էլ համեմատաբար ուշ են զարգանում. տեսողականը լսողականի վերաբերմանը առաւելութիւն ունիւ ներկայ գպրոցական ուսման մէջ նախապատռութիւնը տրւում է տեսողական տպաւորութիւնների զարգացմանը, իսկ լսողականը ետին շարքն է անցնում. Տղաները իրենց յիշողութեան կազմութեան չնորհիւ աւելի հակուած են վերացական մտածողութեան, աղջիկները՝ զգայարանական-շօշափելի տպաւորութիւնների. 11—14 տարեկան հասակում՝ աղջիկների յիշողութիւնը ընդհանուրապէս համեմատաբար տղաների յիշողութիւնից աւելի լաւ է զարգանում. 14 տարեկան հասակում տղաները հասնում են աղջիկներին և նրանցից էլ առաջ անցնում. նկատուած է՝ որ ֆիզիքապէս առողջ երեխաների յիշողութիւնը աշխատանքի համար աւելի բարեյաջող պայմաններունիւ. Հեղինակի ուսումնասիրութեան հիման վրայ ինտե-

լիգենտ երեխաների մեծ մասը աւելի լաւ յիշողութիւն են ունենում:

Անմիջական յիշողութիւնը փորձելու համար ամենից լաւ միջոցը անմիտ խօսքեր ասելու մեթոդն է. առաջարկում են անգիր ասել 10—14 անմիտ վանկեր. այն անձանց, որոնք արդէն վարժութիւն ունին, առաջարկում են 16, 18, 20 և աւելի անմիտ վանկեր. այդ վանկերը երեք տառից են լինում սկզբում և վերջում բաղաձայն, մէջում մի ձայնաւոր. օրինակ գուկ, ֆապ և այլն Փորձերը ցոյց են տալի, որ միևնույն նիւթը անգիր անելու համար հասակաւորը աւելի քիչ ժամանակ և քիչ թուով կրկնութիւններ է գործ է դնում, քան երեխան. ուրեմն հասակաւորը նոյն իսկ մինչև 46 տարեկանը աւելի ընդունակ է անգիր անելու մէջ քան երեխան. իսկ մոռանալու կողմից միևնոյն պայմանները ինկատի ունենալով երկուսի համար էլ, տեսնում ենք, որ հասակաւորը շուտ է մոռանում. իսկ դպրոցի երեխան միանգամ սովորածը մտքում երկար է պահում Հասակաւորի համար հեշտութեամբ սովորելու յաջող ժամանակը 20—25 տարեկան հասակն է. իսկ յետոյ թէ յիշողութիւնը և թէ սովորելու ընդունակութիւնը թուլանում են. յիշողութեան թուլացումը այնքան աւելի դանդաղ է կատարում, որքան աւելի ենք վարժեցնում մեր յիշողութիւնը. սա մի ընդհանուր հոգեբանական կենսաբանական օրէնք է. Մտաւոր անընդհատ վարժութիւնը խանգարում է մեր մտաւոր կարողութեան անժամանակ թուլանալուն. այս պատճառով ժողովրդական դպրոցներում հարկաւոր է գործադրել ձեական մտաւոր վարժութիւններ, բայց ոչ անընդհատ, որովհետև ժամանակ շատ կիսլեն և դասընթացքը կտուժէ:

Վարժութիւն ձեռք բերելու մէջ հասակաւորները աւելի յաջող են, քան երեխաները. իսկ վարժութիւնը մոռանալու մէջ ընդհակառակը. սովորելու ընդունակութիւնը պայմանաւորուած է վարժութեան այն չափովը, որը կար այդ ժամանակ. իսկ յիշողութիւնը, այն պայմաններով, որոնք աստիճանաբար դարձանում են հոգե-

կան — ֆիզիքական օրդանիգմի մէջ։ Բնդհանրապէս տեսնում ենք, որ երեխաները ժողովրդական դպրոցը թողնում, հեռանում են այն ժամանակ, երբ նրանց սովորելու ընդունակութիւնը հասնում է ամենաբարձր աստիճանին, ուստի և կարիք կայ ուսումը 9 տարուայ դասընթացի դարձնել և ոչ 8 (մեզանում 6-է)։ Ժողովրդական դպրոցն աւարտողները եթէ կեանքի մէջ. իրենց սովորածից շատ քիչ բան են յիշում, մասամբ պէտք է վերադրել այդ անքարեյացող հանդամնքին։ Միւս կողմից այդ տիպի դպրոցներում աշակերտի յիշողութեան զարգացման համար ձևական վարժութիւններ քիչ են լինում. աշակերտը ոչ մի կերպ չէ սովորում օգտուել բնականից օժտուած միշտոցներով իւր յիշողութեան զարգացման համար և նրա մէջ այն զիտակցութիւնն էլ չի զարթնում, թէ որքան կարեոր է յիշողութեան զարգացումն. միայն յետոյ հասակաւորները գիտակցում են, թէ դպրոցը որքան մեծ պակաս է թողել իրենց մտաւորի ձևական զարգացման մէջ։

## VI

Մտապատկեր կազմելու զործողութիւնները եւ խօսքը.

Մտապատկերը ստացած տպաւորութեան վերարտայայտուած բովանդակութիւնն է և միաժամանակ նախկին գիտակցութեան ամեն տեսակ ներքին կեդրոնացումը, ուրեմն նա այդ գիտակցութեան բովանդակութեան, մանաւանդ ստացած տպաւորութեան բովանդակութեան վերարտադրութեան միութիւնն է. վերարտադրումը կարող է երկու կերպ լինել. մի դէպքում մտապատկերը վերաբերում է նախկին ստացած որոշ տպաւորութիւններին և այդ դէպքում կոչում է յիշողութեան մտապատկեր, երկրորդ դէպքում չի վերաբերում որոշ տպաւորութիւնների, այլ նա տպաւորութնւնների տարրելի ազատ միացումն է և կոչում է երեակայութեան մտապատկերներ, երկուսի մէջ ճշգրիտ որոշուած տարրերութիւն չկայ. Մտապատկերները, որոշ անխախտ կազմակերպութիւններ չեն. նայելով

մտքի ընթացքին, նրանք զանազան տեսակ կազմութիւններ են ստանում. օրինակ՝ եթէ Քեօնիգսբերգի դղեակի մտապատկերը վերարտադրւում է պատմական նկատումների շնորհիւ, այդ գէպքում մտապատկերի մէջ գլխաւոր տիպը կտրուի այն շինութիւններին, որոնց մէջ տեղի են ունեցել պատմական անցքեր, եթէ գեղարուեստի պատմութեան տեսակէաից է վերարտադրւում, գլխաւոր տեղը կրոնի նրա ճարտարապետական մասը և այլն. ուրեմն մի մտապատկեր, որ միենայն խօսքով է արտայայտւում, շատ տարբեր բովանդակութիւն կարող է ունենալ, կարող են նրա մասերը փոփոխուել, նայելով թէ ինչ մտքերի շարքի շնորհիւ է առաջ եկել:

Մտապատկերները լինում են՝ առարկայական և խօսքի. վերջիններիս շնորհիւ մեր մտածողութիւնը ստանում է վերացական—այլաբանական բնոյթ։ Մտապատկերը վերարտադրւում է երկու կերպ՝ կամ թռիչքով, երբ օրինակ մի բան են ասում և խօսյն դիմացինի մէջ մի ուրիշ մտապատկեր է զարթում, առանց որ և է ընդհանուր կապ ունենալու ասածի հետ, կամ՝ գատողութեան շնորհիւ, երբ տպաւորութիւնը որոշ ճանապարհով է արտադրւում։ Բառը ըստ ինքեան ցոյց չի տալի, թէ արդեօք նա ընդհանուր բնոյթ ունի, թէ անհատական. այս հնարաւոր է բացատրել միայն հարցի ու փորձի միջոցով. եթէ մանուկին ասենք «վարդ», նա կարող է ընդհանուր մտքով հասկանալ կամ հասկանալ այն վարդը, որ նա տեսել է որոշ տեղ, որոշ ժամանակ։

Մանուկների վրայ կատարուած փորձերը ցոյց են տալիս, որ նրանց մտապատկերները աւելի յաճախ թռիչքներով են տեղի ունենում, քան հասակաւորներինը։ Երբ մանուկը որևէ մտապատկեր վերարտադրելու մի ձև է գտնում, աշխատում է այդ ձևն էլ պահել և նրա վերարտադրութեան մէջ նկատում է նոյն բառի յաճախ գործածութիւնը։ Նրա մտապատկերները աւելի առարկայական են քան բառական։ Մանուկը աւելի մեծ չափով է մտածում անհատական մտապատկերներով, քան հասա-

կաւորը։ Վերջինս սովորաբար լսած խօսքը իսկոյն ըմբռունում է ընդհանուր և վերացական իմաստով, մանուկը այդ բացատրում է իր թանձրացեալ, անհատական մտապատկեր, մեծ մասամբ իր տարածութեամբ որոշ մի բան։ Ցիգենը նկատել է, որ 6—12, 13 տարեկան, ընդունակութիւններով օժտուած մանուկները աւելի անհատական մտապատկերներ ունին, քան նոյն հասակի պակաս օժտուածներ։ Հոգեբանական—մանկավարժական տեսակէտից կարեոր է որքան կարելի է կօնկրէտ շատ մտապատկերներ ունենալ, որքան կարելի է լաւ ու որոշ խորացնել մտապատկերների բովանդակութիւնը։ ապագայում բառերի վերացական իմաստը այս դէպքում աւելի որոշ ու լաւ կլինի։

(շարունակելի)

Pessimist.

### ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ՑԻԱԼԵՐԻ ԶԵԽԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ.

ՑիԱԼԵՐԵ դասաւանդման տեսութիւնը որպէս զի ընթերցողի համար աւելի պարզուե, տալիս ենք ՑիԱԼԵՐԵան դպրոցին պատկանողներից մէկի ձեւական հինգ աստիճանների միջոցաւ մշակած մի օրինակելի դաս \*):

ՈՐՈՅԱՑՈՂ ԿԵՆԴԱՆԵՒՆԵՐ

(Մեթոդական միութիւն արստրակցիայի պրոցէսով),

1. Եւ II. Աստիճան

Առաջին ու երկրորդ աստիճանները չեն կարող այստեղ առանձին առանձին մշակուել, որովհետեւ առաջին աստիճանը ընականաբար սաների փորձառութեան շրջանին համապատասխան պէտք է լինի։ Յատկապէս պէտք է այստեղ մատնացոյց

\*.) Օրինակը վերցրած է Յ. Տէր-Միրաբեանի «Ուղիցոյց դասաւանդման» գրքից։ Ով ցանկանում է ժեւական աստիճանների տեսականի եւ դորձնականի հետ աւելի մօտ ծանօթանալ, թող կարդայ ալդ դիքը։